

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միակ  
մասնակցի՝ ԳԱԶԵԼ ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ  
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ. ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
20.03.2018թ.-ի թիվ 1 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
27.01.2019թ.-ի թիվ GF-27.01.2019 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
28.03.2019թ.-ի թիվ GF-28.03.2019 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
24.06.2019թ.-ի թիվ GF-24.06.2019 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
05.10.2019թ.-ի թիվ GF-05.10.2019 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
14.01.2020թ.-ի թիվ GF-14.01.2020 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ  
ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.  
ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ  
21.04.2020թ.-ի թիվ GF-21.04.2020 որոշմամբ

**Փոփոխված է** ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ ԳԱԶԵԼ

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
20.07.2018թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
27.02.2019թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
17.04.2019թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
24.07.2019

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
30.10.2019

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
12.02.2020

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀՀ կենտրոնական բանկում  
13.05.2020

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՖԱՅՆԵՆՍ ՀՈԼԴԻՆԳ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅՈՒ.

ԷՅ. ԽՈՐՀՐԴԻ

01.06.2020թ.-ի թիվ GF-01.06.2020 որոշմամբ

**Փոփոխված է ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ. ԽՈՐՀՐԴԻ  
22.07.2020թ.-ի թիվ GF-22.07.2020 որոշմամբ

**Փոփոխված է ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ. ԽՈՐՀՐԴԻ  
26.10.2020թ.-ի թիվ GF-26.10.2020 որոշմամբ

**Փոփոխված է ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ. ԽՈՐՀՐԴԻ  
25.03.2021թ.-ի թիվ GF-25.03.2021 որոշմամբ

**Փոփոխված է ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ.  
01.10.2021թ.-ի թիվ GF-01.10.2021 որոշմամբ

**Փոփոխված է «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ.  
29.08.2022թ.-ի թիվ GF-29082022 որոշմամբ

**Փոփոխված է «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ**  
ՍՊԸ-ի միակ մասնակցի՝ Գազել ֆայնենս  
հոլդինգ կոոպերատիվ Յու. Էյ.  
24.02.2023թ.-ի թիվ GF-24022023 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում  
17.06.2020

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում  
16.09.2020

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում  
12.11.2020

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում  
23.04.2021թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում  
22.10.2021թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**  
ՀՀ կենտրոնական բանկում

**Գործադիր տնօրեն-Տնօրինության  
նախագահ  
Տիգրան Հովհաննիսյան**

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝**

(ստորագրություն)

(ստորագրություն)

**APPROVED BY**

Resolution No 1 dated 20.03.2018 of  
the BOARD of GAZELLE FINANCE HOLDING  
COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia  
on 20.07.18

**Amended by** Resolution No GF-27.01.2019 dated  
27.01.2019 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 27.02.19

**Amended by** Resolution No GF-28.03.2019 dated  
28.03.2019 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 17.04.19

**Amended by** Resolution No GF-24.06.2019 dated  
24.06.2019 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 24.07.19

**Amended by** Resolution No GF-05.10.2019 dated  
05.10.2019 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 30.10.19

**Amended by** Resolution No GF-14.01.2020 dated  
14.01.2020 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 12.02.20

**Amended by** Resolution No GF-21.04.2020 dated  
21.04.2020 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**

the Central Bank of Armenia on 13.05.20

**Amended by** Resolution No GF-01.06.2020 dated  
01.06.2020 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia on 17.06.20

**Amended by** Resolution No GF-22.07.2020 dated  
22.07.2020 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia on  
16.09.20

**Amended by** Resolution No GF-26.10.2020 dated  
26.10.2020 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia on  
12.11.20

**Amended by** Resolution No GF-25.03.2021 dated  
25.03.2021 of the BOARD of GAZELLE  
FINANCE HOLDING COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia on  
23.04.21

**Amended by** Resolution No GF-01.10.2021 dated  
01.10.2021 of GAZELLE FINANCE HOLDING  
COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
The Central Bank of Armenia on 22.10.21

**Amended by** Resolution No GF-29082022 dated  
29.08.2022 of GAZELLE FINANCE HOLDING  
COÖPERATIEF U.A.,  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia

**Amended by Resolution No GF-24022023 dated**  
**24.02.2023 of GAZELLE FINANCE HOLDING**  
**COÖPERATIEF U.A.,**  
the sole participant of GAZELLE FINANCE UCO  
LLC

**REGISTERED WITH**  
the Central Bank of Armenia

Executive Director-Chairman  
of the Management Board

Chairman of the Central Bank of Armenia

---

Tigran Hovhannisyan

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**CHARTER**

**«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ»**

ունիվերսալ վարկային կազմակերպություն  
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

**GAZELLE FINANCE**  
Universal Credit Organization  
Limited Liability Company

Նոր խմբագրություն  
New edition

2023

| 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ  | 1. GENERAL PROVISIONS  |
|---|--|
| <p>1.1. Սույն Կանոնադրությունը հանդիսանում է «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ունեվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադիր փաստաթուղթը, որի դրույթները պարտադիր են Ընկերության բաժնեմասերի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ «Մասնակից(ներ)») և Ընկերության կառավարման մարմինների համար: Իր գործունեության իրականացման ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգրք»), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ «Օրենք»), վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենքներով, նորմատիվ իրավական այլ ակտերով (բոլորը միասին՝ «Օրենսդրություն») և սույն Կանոնադրությամբ: Ընկերությունը համարվում է ստեղծված և սկսում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») գրանցվելուց և վերջինիս կողմից լիցենզավորվելուց հետո:</p> | <p>1.1. This Charter is the founding document of GAZELLE FINANCE Universal Credit Organization Limited Liability Company (hereinafter referred to as the “Company”), the provisions of which are binding for the persons and legal entities who are the owners of the shares of the Company (hereinafter referred to as the “Participant(s)”) and the governing bodies of the Company. During the conduct of its activities the Company shall be governed by the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the “Code”), the Law of the Republic of Armenia on Limited Liability Companies (hereinafter referred to as the “Law”), the laws regulating the activities of credit organizations, other legal acts (hereinafter collectively referred to as the “Legislation”) and this Charter. The Company is deemed to have been established and starts the conduct of its activities upon registration with and licensing by the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred to as “CBA”).</p> |
| <p>1.2. Ընկերությունը շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնեմասերի, որոնք հաստատում են վերջիններիս սեփականատերերի պարտավորական իրավունքները Ընկերության նկատմամբ:</p>  | <p>1.2. The Company is a commercial entity established with the purpose of earning profit, the charter capital of which is divided into a certain number of shares certifying the obligatory rights of their owners towards the Company.</p>   |
| <p>1.3. Ընկերության Մասնակցի (Մասնակիցների) և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) գործող օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:</p>  | <p>1.3. The relations between the Company and its Participant(s) shall be regulated by the effective legislation of the Republic of Armenia (RA) and this Charter.</p>   |
| <p>1.4. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր</p>   | <p>1.4. The Company owns separate property and is liable for its obligations with such property. The Company may enter into transactions on its own behalf, acquire and exercise proprietary and</p>   |

|   |   |
|---|---|
| <p>անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:</p>   | <p>personal non-proprietary rights, bear obligations and act as plaintiff or respondent before the court.</p>   |
| <p>1.5. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է ունենալ հայերեն և անգլերեն լեզուներով իր անվանումը պարունակող կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և Օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ապրանքային և առևտրային նշաններ, իրավաբանական անձի համար անհրաժեշտ այլ վավերապայմաններ:</p>  | <p>1.5. The Company has a separate balance sheet and may have English and Armenian round seals, stamps, letterheads bearing its name or an emblem, as well as trademarks and other requisites necessary for a legal entity registered in accordance with the Legislation.</p>   |
| <p>1.6. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 105/1 շ., 9 տարածք («Ցիտադել» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ, գրասենյակ 505):</p>  | <p>1.6. The Company is located at Republic of Armenia, Yerevan, 105/1 Teryan street, premise 9 (Citadel business centre, 5th floor, office 505).</p>  |
| <p>1.7. Ընկերության պաշտոնական ֆիրմային անվանումն է.</p> <p>հայերեն՝ «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.</p> <p>անգլերեն՝ GAZELLE FINANCE Universal Credit Organization limited liability company.</p> <p>ռուսերեն՝ «ГАЗЕЛЬ ФИНАНС» универсальная кредитная организация общество с ограниченной ответственностью.</p> <p>Ընկերության անվանման կրճատ տարբերակն է.</p> <p>հայերեն՝ «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ.</p> <p>անգլերեն՝ GAZELLE FINANCE UCO LLC.</p> <p>ռուսերեն՝ «ГАЗЕЛЬ ФИНАНС» УКО ООО.</p> | <p>1.7. The official name of the Company is:</p> <p>In Armenian: «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.</p> <p>In English: GAZELLE FINANCE Universal Credit Organization limited liability company.</p> <p>In Russian: «ГАЗЕЛЬ ФИНАНС» универсальная кредитная организация общество с ограниченной ответственностью.</p> <p>The short name of the Company is:</p> <p>In Armenian: «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ.</p> <p>In English: GAZELLE FINANCE UCO LLC.</p> <p>In Russian: «ГАЗЕЛЬ ФИНАНС» УКО ООО.</p> |
| <p>2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ</p>  | <p>2. PURPOSES OF THE ACTIVITY OF THE COMPANY AND TYPES OF OPERATIONS CARRIED OUT BY IT</p>   |

|  |   |
|--|---|
| <p>2.1. Ընկերության նպատակն է Օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Մասնավորապես, Ընկերությունը կարող է.</p>  | <p>2.1. The purpose of the Company is earning profit through conduct of financial activities prescribed by the Legislation. In particular, the Company may:</p>   |
| <p>2.1.1. ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,</p>  | <p>2.1.1. attract loans and enter into similar transactions, except for raising funds through public offers;</p>  |
| <p>2.1.2. տրամադրել վարկեր, փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ, ներառյալ, բայց ոչ միայն՝ շահույթին մասնակցության գործիքներ,</p>   | <p>2.1.2. provide credits, loans, and enter into similar transactions, including but not limited to providing income participation instruments;</p>   |
| <p>2.1.3. իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքի ֆինանսավորում, ֆակտորինգ,</p>  | <p>2.1.3. carry out financing of debt or commercial transactions and factoring operations;</p>  |
| <p>2.1.4. տրամադրել երաշխիքներ,</p>  | <p>2.1.4. provide guarantees;</p>   |
| <p>2.1.5. թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել, ներառյալ, բայց ոչ միայն՝ այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առք և վաճառք (այսինքն՝ ներդրումներ կապիտալում)</p> | <p>2.1.5. issue securities, as well as enter into transactions with securities on its own behalf and at its own expense, including, but not limited to sale and purchase of shares in charter capital of other legal entities (i.e., equity investments);</p> |
| <p>2.1.6. մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,</p>  | <p>2.1.6. provide payment and settlement services related to the activities of a credit organization;</p>   |
| <p>2.1.7. թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իր հաշվին և իր անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ,</p>  | <p>2.1.7. issue financial derivatives instruments, as well as enter into transactions with such instruments on its own behalf and at its own expense;</p>   |
| <p>2.1.8. մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորային) կառավարում,</p>   | <p>2.1.8. provide financial agent (representative) services, manage investments of other persons, carry out entrusted (fiduciary) management;</p>   |
| <p>2.1.9. գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ,</p>   | <p>2.1.9. purchase, sell and manage bank gold and standard bullions and coins;</p>  |



|  |  |
|--|--|
| <p>2.1.10. գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում, բայց ոչ միայն՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նմանատիպ այլ գործարքներ,</p>  | <p>2.1.10. purchase and sell foreign currency, including, but not limited to entering into AMD and foreign currency futures, options and other similar transactions;</p>   |
| <p>2.1.11. իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),</p>  | <p>2.1.11. carry out financial leasing;</p>  |
| <p>2.1.12. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,</p>  | <p>2.1.12. accept for storage precious metals, stones, jewellery, securities, documents and other values;</p>  |
| <p>2.1.13. մատուցել ֆինանսական խորհրդատվություն,</p>   | <p>2.1.13. provide financial consulting services;</p>  |
| <p>2.1.14. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,</p>   | <p>2.1.14. establish and maintain customer creditworthiness information system, carry out debt collection activities;</p>  |
| <p>2.1.15. հանդես գալ որպես ապահովագրական գործակալ,</p>  | <p>2.1.15. act as an insurance agent;</p>  |
| <p>2.1.16. ՀՀ ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:</p>  | <p>2.1.16. carry out other operations inherent to credit organizations and acceptable in international practice upon the consent of the CBA.</p>   |
| <p><b>2.2.</b> Ընկերությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք (պայմանագիր), որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար: Ընկերությունը կարող է կնքել այնպիսի գործարքներ, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում Ընկերության համար, սակայն կապված չեն վերջինիս կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ: Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և (կամ) լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:</p> | <p><b>2.2.</b> The Company may enter into any type of civil transactions (agreements) necessary or expedient for the achievement of its statutory purposes. The Company may enter into transactions, which create monetary obligations for the Company and are not related to selling goods, providing services or performing works for the creditors by the Company. The Company may not carry out production, commercial and (or) any other activity subject to licensing.</p> |
| <p><b>2.3.</b> Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով (բանկային փոխանցումների միջոցով):</p>  | <p><b>2.3.</b> The Company shall carry out the operations prescribed under Article 8 of the Law of the Republic of Armenia on Credit Organizations solely in a non-cash way (via bank transfers).</p>  |

|   |  |
|---|--|
| <p><b>2.4.</b> Ընկերությունը կարող է փոխառություններ ներգրավել և (կամ) նմանատիպ գործարքներ կնքել իրավաբանական անձանց, իր Մասնակցի (Մասնակիցների), անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ բացառապես Օրենսդրությամբ սահմանված կարգով և վերջինիս պահանջներին համապատասխան:</p>  | <p><b>2.4.</b> The Company may attract loans from and (or) enter into similar transactions with legal entities, its Participant(s), individual entrepreneurs, the Republic of Armenia and communities, other states and international organizations, solely in accordance with the terms and in the manner prescribed by the Legislation.</p>  |
| <p><b>2.5.</b> Ընկերությունը հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չի մատուցում ֆիզիկական անձանց:</p>   | <p><b>2.5.</b> The Company does not provide services through public offer to individuals.</p>  |
| <p><b>2.6.</b> Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով չի ներգրավում փոխառություններ:</p>   | <p><b>2.6.</b> The Company does not attract loans through public offer.</p>  |
| <p style="text-align: center;"><b>3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p>  | <p style="text-align: center;"><b>3. RIGHTS AND OBLIGATIONS OF THE COMPANY</b></p>   |
| <p><b>3.1.</b> Ընկերությունն ունի սույն Կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ: Ընկերությունն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում է իր հայեցողությամբ: Ընկերության կողմից իր այդ իրավունքների իրականացումից հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարման՝ բացառությամբ Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:</p> | <p><b>3.1.</b> The Company has civil rights consistent with the purposes of its activities prescribed by this Charter and bears obligations related to such activities. The Company may exercise its civil rights, including the right of their protection, at its discretion. Waiver of exercise of such rights by the Company shall not result in their termination, unless otherwise provided by the Legislation.</p> |
| <p><b>3.2.</b> Ընկերությունը կարող է լինել այլ (ներառյալ, բայց ոչ միայն՝ դուստր և կախյալ) ընկերության հիմնադիր, եթե դա արգելված չէ Օրենսդրությամբ:</p>  | <p><b>3.2.</b> The Company may be a founder of another company (including, but not limited to subsidiaries and dependent companies), unless otherwise provided by the Legislation.</p>   |
| <p><b>3.3.</b> Ընկերությունն ունի Օրենսդրությամբ վարկային կազմակերպություններին վերապահված իրավունքներ և կրում է Օրենսդրությամբ նախատեսված պարտականություններ՝ անկախ դրանք սույն Կանոնադրությամբ նախատեսված լինելու հանգամանքից, եթե Օրենսդրությամբ կամ սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:</p>  | <p><b>3.3.</b> The Company has the rights and bears the obligations provided for credit organizations by the Legislation, regardless of whether such rights or obligations are prescribed by this Charter, unless otherwise provided by the Legislation or this Charter.</p>   |
| <p><b>3.4.</b> Ընկերությունն իրավունք ունի.</p>   | <p><b>3.4.</b> The Company has the right to:</p>   |

|   |   |
|---|---|
| <p>3.4.1. Օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում, բայց ոչ միայն՝ արժեթղթեր, տիրապետել օգտագործել ու տնօրինել այն և դրանից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,</p>   | <p>3.4.1. acquire property, including, but not limited to securities, possess, use and dispose of such property and the income or other useful result received from such property in any way not prohibited by the Legislation;</p>   |
| <p>3.4.2. Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս Օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնել առաձևացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ,</p>  | <p>3.4.2. establish separate subdivisions (branches and representative offices) in the territory of the Republic of Armenia and outside it, in accordance with the Legislation;</p>   |
| <p>3.4.3. իր հայեցողությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան սահմանել իր կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների և մատուցվող ծառայությունների տոկոսադրույքերը, միջնորդավճարները և վարկ տրամադրելու առնչությամբ մատուցված այլ ծառայությունների դիմաց գանձվող վճարները,</p>  | <p>3.4.3. define at its discretion and in accordance with the secondary acts of the CBA the interest rates and commission fees for financial operations carried out and services provided by it, as well as the fees charged for other services provided in relation to provision of loans;</p>   |
| <p>3.4.4. Ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով իրացնել (վաճառել) գրավադրված գույքը,</p>   | <p>3.4.4. sell collaterals for the purpose of securing obligations towards the Company;</p>   |
| <p>3.4.5. Հայաստանի Հանրապետության այլ վարկային և ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց և քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց հետ ստեղծել միավորումներ և ցանկացած այլ միություններ,</p>  | <p>3.4.5. establish any type of associations or unions with other credit organizations, financial institutions, legal entities and citizens of the Republic of Armenia, as well as foreign legal entities;</p>  |
| <p>3.4.6. գնել, վարձակալել, ստանալ, ներդնել, որևէ օրինական եղանակով վերցնել կամ այլ կերպ ձեռք բերել, տիրապետել, տնօրինել, բարելավել, օգտագործել և այլ գործողությունների ենթարկել անշարժ և շարժական գույք, ինչպես նաև վաճառել, փոխանցել, վարձակալել, փոխանակել կամ այլ կերպ օտարել, գրավադրել կամ ծանրաբեռնել իր գույքը և ակտիվները կամ դրանց ցանկացած մաս կամ դրանց հետ կապված ցանկացած իրավունք,</p> | <p>3.4.6. purchase, lease, receive, invest, take or acquire in any other legal manner, possess, dispose of, improve, use and perform other actions in relation to movable and immovable property, as well as sell, transfer, lease, exchange or assign in any other manner, pledge or cause encumbrances arise over its property, assets or a part of such property and assets or any right related to such property or assets;</p> |

|   |  |
|---|--|
| <p>3.4.7. ներմուծել և արտահանել իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ,</p>   | <p>3.4.7. import and export products, works and services necessary for the conduct of its activities;</p>  |
| <p>3.4.8. Օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում բացել, ունենալ և օգտագործել դրամով և (կամ) արտարժույթով բանկային հաշիվներ,</p>   | <p>3.4.8. open, have and use AMD and (or) foreign currency bank accounts in the Republic of Armenia and other states, in accordance with the Legislation;</p>  |
| <p>3.4.9. Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս դատարաններում և արբիտրաժային մարմիններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, դատավարության շրջանակներում հետամուտ լինել դատավճիռների կայացմանը, ճանաչմանը, ի կատար ածմանը և հարկադիր կատարմանը, ինչպես նաև վեճերի խաղաղ լուծման վերաբերյալ հաշտություն կնքել,</p>   | <p>3.4.9. act as plaintiff and respondent before courts and arbitral bodies in the territory of the Republic of Armenia and outside it, pursue the adoption, recognition, execution and enforcement of judgments in the scope of court proceedings and enter into settlement agreements for the amicable resolution of disputes;</p>   |
| <p>3.4.10. աշխատանքի ընդունել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա ֆիզիկական անձանց և որոշել նրանց աշխատանքային պարտականությունների շրջանակը և վարձատրության չափը,</p>  | <p>3.4.10. employ citizens of the Republic of Armenia and foreign citizens and determine the scope of their duties and the amount of their remuneration;</p>   |
| <p>3.4.11. Օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել իրավաբանական անձանց և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում, վերջիններիս օրենսդրությանը համապատասխան, իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք կամ լինել դրանց մասնակից, օգտվել Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից,</p> | <p>3.4.11. provide paid services and perform paid works for legal entities and citizens and use such services and works of legal entities and citizens in accordance with the Legislation, as well as make investments in, establish or be participant of legal entities in other countries in accordance with the legislation of such countries and exercise other rights provided by the Legislation and this Charter.</p> |
| <p>3.4.12. Օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,</p>  | <p>3.4.12. issue and allocate securities on its own behalf, in the manner prescribed by the Legislation;</p>   |
| <p>3.4.13. իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը կապված է Ընկերության նպատակների հետ և</p>  | <p>3.4.13. carry out any other activity related to the purposes of the Company, unless explicitly prohibited by the Legislation.</p>   |

|   |   |
|---|---|
| <p>ուղղակիորեն արգելված չէ<br/>Օրենսդրությամբ:</p>  |   |
| <p><b>3.5.</b> Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և Օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>   | <p><b>3.5.</b> The rights of the Company may be limited solely in cases and in the manner prescribed by the Legislation.</p>  |
| <p><b>3.6.</b> Ընկերությունը պարտավոր է.</p>  | <p><b>3.6.</b> The Company shall:</p>   |
| <p>3.6.1. Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և այլ հաշվետվություններ,</p>  | <p>3.6.1. maintain its accounting and submit financial and other reports in the manner prescribed by the Legislation;</p>   |
| <p>3.6.2. ապահովել Ընկերության փաստաթղթերի և Օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի սահմանված կարգով պահպանումը,</p>   | <p>3.6.2. ensure in the prescribed manner the preservation of the documents of the Company and other documents provided by the Legislation;</p>   |
| <p>3.6.3. կրել Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:</p>   | <p>3.6.3. bear other obligations provided by the Legislation and this Charter.</p>  |
| <p><b>4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</b></p>  | <p><b>4. LIABILITY OF THE COMPANY AND ITS PARTICIPANTS</b></p>  |
| <p><b>4.1.</b> Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:</p>  | <p><b>4.1.</b> The Company shall be liable for its obligations with its entire property.</p>  |
| <p><b>4.2.</b> Ընկերությունը պատասխանատու չէ իր Մասնակցի (Մասնակիցների) պարտավորությունների համար:</p>  | <p><b>4.2.</b> The Company shall not be liable for the obligations of its Participant(s).</p>   |
| <p><b>4.3.</b> Ընկերության Մասնակիցը (Մասնակիցները) պատասխանատվություն չի (չեն) կրում Ընկերության պարտավորությունների համար և իրեն(ց) պատկանող բաժնեմասերի արժեքի սահմաններում կրում է (են) Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:</p>   | <p><b>4.3.</b> The Participant(s) of the Company shall not be liable for the obligations of the Company and shall bear the risk of damages related to the activities of the Company in the scope of the value of his/her/its shares.</p>                |
| <p><b>4.4.</b> Ընկերության Մասնակիցը (Մասնակիցները), որն (որոնք) Ընկերության կանոնադրական կապիտալում իր (իրենց) ավանդն ամբողջությամբ չի (չեն) ներդրել, համապարտ պատասխանատվություն է (են) կրում Ընկերության պարտավորությունների համար՝ իր (իրենց) ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում:</p> | <p><b>4.4.</b> The Participant(s) of the Company, who has (have) not fully paid the deposit to the charter capital, shall bear joint liability for the obligations of the Company in the scope of the value of the non-paid portion of the deposit.</p> |
| <p><b>4.5.</b> Այն դեպքում, երբ Ընկերությունը հանդիսանում է մեկ այլ (հիմնական)</p>  | <p><b>4.5.</b> In the event the Company is a subsidiary of another (parent) company or partnership:</p>   |

|  |  |
|--|--|
| <p>ընկերության կամ ընկերակցության դուստր ընկերություն, ապա.</p>  |  |
| <p>4.5.1. Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որն Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, Ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար: Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է Ընկերության հետ կնքված պայմանագրում:</p>   | <p>4.5.1. The parent company or partnership, which has the right to give binding instructions to the Company, shall bear joint liability for the obligations of the Company in relation to transactions entered into in accordance with such instructions. The parent company or partnership is deemed to have the right to give binding instructions if such right is provided by an agreement entered into with the Company.</p>       |
| <p>4.5.2. Հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով Ընկերության սնանկության դեպքում հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը սուբսիդիար պատասխանատվություն է կրում նրա պարտքերի համար: Ընկերության սնանկությունը հիմնական ընկերակցության կամ ընկերության մեղքով առաջացած է համարվում, եթե այն վրա է հասել Ընկերության կողմից հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով:</p> | <p>4.5.2. In case of the Company’s bankruptcy caused by the fault of the parent company or partnership, such company or partnership shall bear subsidiary liability for the debts of the Company. The bankruptcy of the Company is deemed to be caused by the fault of the parent company or partnership if such bankruptcy is the result of fulfilment by the Company of binding instructions of the parent company or partnership.</p> |
| <p>4.6. ՀՀ ԿԲ-ն և Ընկերությունը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, եթե Օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:</p>  | <p>4.6. The CBA and the Company shall not bear any liability for the obligations of each other, unless otherwise provided by the Legislation.</p>  |
| <p>4.7. Հայաստանի Հանրապետությունը և (կամ) համայնքները (պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինները) և Ընկերությունը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար:</p>  | <p>4.7. The Republic of Armenia and (or) communities (state and (or) local self-governing bodies)) and the Company shall not bear liability for the obligations of each other.</p>   |
| <p><b>5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b></p>   | <p><b>5. PROPERTY OF THE COMPANY</b></p>   |
| <p>5.1. Ընկերության գույքը պատկանում է Ընկերությանը սեփականության իրավունքով:</p>  | <p>5.1. The Company has title over its property.</p>   |
| <p>5.2. Ընկերության սեփականության իրավունքի օբյեկտներն են.</p>   | <p>5.2. The property of the Company includes:</p>  |

|   |  |
|---|--|
| <p>5.2.1. բաժնեմասերի դիմաց վճարման տեսքով Մասնակցի (Մասնակիցների) ներդրած (կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրված) բոլոր միջոցները,</p>  | <p>5.2.1. the entirety of funds invested by the Participant(s) as payments against the shares (invested as deposits in the charter capital);</p>   |
| <p>5.2.2. Ընկերության գործունեությունից ստացված եկամուտները,</p>  | <p>5.2.2. earnings from the Company's activities;</p>  |
| <p>5.2.3. չբաշխված շահույթը,</p>  | <p>5.2.3. retained earnings;</p>   |
| <p>5.2.4. Օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքը, ինչպես նաև Օրենսդրությամբ նախատեսված այլ գույքը:</p>  | <p>5.2.4. property acquired in the manner not prohibited by the Legislation, as well as other property provided by the Legislation.</p>  |
| <p>5.3. Ընկերությունը կարող է որպես սեփականություն ունենալ ցանկացած գույք, բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք, Օրենսդրության համաձայն, չեն կարող պատկանել Ընկերությանը:</p>   | <p>5.3. The Company may have title over any property, except for certain types of property, which may not be subject to such title by the Company in accordance with the Legislation.</p>  |
| <p>5.4. Ընկերության գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:</p>  | <p>5.4. The property of the Company may be foreclosed solely in cases and in the manner prescribed by the Legislation.</p>   |
| <p><b>6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ</b></p>  | <p><b>6. CHARTER CAPITAL AND RESERVES OF THE COMPANY</b></p>   |
| <p>6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է Ընկերության պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված չափից:</p>   | <p>6.1. The charter capital of the Company represents the minimum amount of the Company's property securing the interests of its creditors. The minimum amount of the charter capital of the Company shall not be less than the amount determined by the CBA.</p>  |
| <p>6.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3,688,690,420 (երեք միլիարդ վեց հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր իննսուն հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որը բաժանված է 1 հատ բաժնեմասի՝ 3,688,690,420 (երեք միլիարդ վեց հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր իննսուն հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ անվանական արժեքով:</p> | <p>6.2. The charter capital of the company is AMD 3,688,690,420 (three billion six hundred eighty-eight million six hundred ninety thousand four hundred twenty) divided into 1 share with a face value of AMD 3,688,690,420 (three billion six hundred eighty-eight million six hundred ninety thousand four hundred twenty).</p> |
| <p>6.3. Ընկերության Միակ Մասնակից է հանդիսանում Գազել Ֆայնենս Հոլդինգ Կոոպերատիվ ՅՈՒ.ԷՅ.-ը (այսուհետ՝ «Միակ Մասնակից»): Մեկ բաժնեմասը սեփականության իրավունքով պատկանում է Միակ Մասնակցին՝ համաձայն սույն Կանոնադրության հավելված 1-ի (կցվում է):</p>   | <p>6.3. The Sole Participant of the Company is GAZELLE FINANCE HOLDING COÖPERATIEF U.A. (hereinafter referred to as the "Sole Participant"). The Sole Participant has title over 1 share in accordance with Annex 1 of this Charter (attached).</p>  |

|  |   |
|--|---|
| <p>6.4. Չի թույլատրվում հիմնադրի կողմից ավանդի ներդրման պարտականությունից ազատում, այդ թվում՝ Ընկերության հանդեպ նրա պահանջների հաշվանցմամբ:</p>   | <p>6.4. Exemption from obligation of a founder to pay the deposit, including upon set-off of claims of the founder against the Company, shall be prohibited.</p>  |
| <p>6.5. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել բաժնեմասերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնեմասերի տեղաբաշխման միջոցով՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>  | <p>6.5. The charter capital of the Company may be increased via increase of the face value of its shares or allocation of additional shares, in the manner prescribed by the Legislation.</p>   |
| <p>6.6. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո:</p>   | <p>6.6. The charter capital of the Company may be increased only after its full payment.</p>  |
| <p>6.7. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել Ընկերության գույքի հաշվին կամ Մասնակցի (Մասնակիցների) լրացուցիչ ավանդների հաշվին կամ երրորդ անձանց ավանդների հաշվին:</p>  | <p>6.7. The charter capital of the Company may be increased on the account of its property or additional investments of the Participant(s) or third parties.</p>  |
| <p>6.8. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը նրա գույքի հաշվին իրականացվում է Միակ Մասնակցի որոշման հիման վրա:</p>   | <p>6.8. The charter capital of the Company may be increased on the account of its property upon the resolution of the Sole Participant.</p>   |
| <p>6.9. Ընկերության գույքի հաշվին նրա կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում Ընկերությունը համապատասխանորեն մեծացնում է նաև բաժնեմասերի անվանական արժեքը՝ անփոփոխ թողնելով յուրաքանչյուր Մասնակցի բաժնեմասերի չափը:</p>   | <p>6.9. In case of increase of the charter capital of the Company on the account of its property, the Company shall increase the face value of its shares without changing the number of shares owned by each Participant.</p>  |
| <p>6.10. Միակ Մասնակիցը կարող է որոշում ընդունել՝ ավելացնելու Ընկերության կանոնադրական կապիտալը Միակ Մասնակցի կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով:<br/> Լրացուցիչ ավանդները ներդրվում են համապատասխան որոշումը ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե Միակ Մասնակցի որոշմամբ ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ:<br/> Լրացուցիչ ավանդների ներդրման ժամկետից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո, Միակ Մասնակիցը պետք է որոշում ընդունի լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների և սույն Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝</p> | <p>6.10. The Sole Participant may adopt a resolution on the increase of the charter capital of the Company via investment of additional deposits by the Sole Participant.<br/> Additional deposits shall be invested within one year upon adoption of the respective resolution, unless a shorter term is provided by the resolution of the Sole Participant.<br/> Not later than a month upon the investment of additional deposits, the Sole Participant shall adopt a resolution on the results of investment of additional deposits and the amendments to this Charter in relation to the increase of the charter capital of the Company.</p> |



|   |   |
|---|---|
| կապված Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման հետ:   |   |
| 6.11. Միակ Մասնակիցը կարող է երրորդ անձի դիմումի հիման վրա որոշում ընդունել Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ՝ այդ երրորդ անձին որպես նոր Մասնակից ընդունելու միջոցով:   | 6.11. The Sole Participant upon the application of a third party may adopt a resolution on increasing the statutory capital of the Company via accepting such third party as a new Participant.   |
| 6.12. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել (համալրվել) Ընկերության պասիվներում առկա ներգրավված միջոցների մարումից ստացված գումարների հաշվին՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով:  | 6.12. The statutory capital may be increased with the sum, received from repayment of attracted means, available in the liabilities, in compliance with regulations of the CB of RA.  |
| 6.13. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցվելու պահից:   | 6.13. The resolution of the Company to increase the statutory capital shall enter into force upon registration of the respective amendment with the CBA.  |
| 6.14. Ընկերությունն Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և չափերով ստեղծում է պահուստային և (կամ) այլ ֆոնդեր:   | 6.14. The Company may establish reserve and (or) other funds in cases, amounts and in the manner prescribed by the Legislation.   |
| <b>7. ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ</b>   | <b>7. SHARES. SECURITIES OF THE COMPANY</b>   |
| 7.1. Ընկերության Մասնակիցների բաժնեմասերի չափը որոշվում է տոկոսներով կամ մասերի տեսքով: Ընկերության Մասնակցի բաժնեմասի չափը պետք է համապատասխանի նրա բաժնեմասի անվանական արժեքի և Ընկերության կանոնադրական կապիտալի հարաբերությանը: | 7.1. The number of shares of the Participants of the Company is determined in percentage or portions. The number of shares of a Participant of the Company shall correspond to the ratio of the face value of all shares held by such Participant and the charter capital of the Company. |
| 7.2. Ընկերության Մասնակցի բաժնեմասի չափը չի սահմանափակվում: Ընկերության Մասնակիցների բաժնեմասերի փոխհարաբերության փոփոխման հնարավորությունը չի սահմանափակվում:  | 7.2. The number of shares of a Participant of the Company shall not be limited. The possibility of change of ratio of shares between the Participants of the Company shall not be limited.  |
| 7.3. Անձը համարվում է Ընկերության Մասնակից (բաժնեմասի սեփականատեր) ՀՀ ԿԲ կողմից Ընկերության Մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:  | 7.3. A person is deemed a Participant of the Company (owner of shares) upon registration in the register of the Participants of the Company by the CBA.   |
| 7.4. Ընկերությունն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի թողարկել արժեթղթեր, բացառությամբ բաժնետոմսերի:  | 7.4. The Company may issue securities, in the manner prescribed by the Legislation, except for shares of joint stock companies.   |

| <p align="center"><b>8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ,<br/>ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ<br/>ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p>   | <p align="center"><b>8. THE PARTICIPANTS OF THE COMPANY,<br/>THEIR RIGHTS AND OBLIGATIONS</b></p>  |
|---|--|
| <p><b>8.1.</b> Ընկերության Մասնակիցներ են համարվում Օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք: Ընկերության հիմնադիր կամ Մասնակից կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:</p>   | <p><b>8.1.</b> Persons having title, in the manner prescribed by the Legislation, over a share of the Company are deemed Participants of the Company. Participants of the Company may be individuals, legal entities, the Republic of Armenia and communities.</p>   |
| <p><b>8.2.</b> Ընկերությունը, սույն Կանոնադրության 6.3 կետի համաձայն, ունի մեկ Մասնակից: Միակ Մասնակիցն իրականացնում է հիմնադիրներին և Մասնակիցներին Օրենքով վերապահված իրավունքները և պարտականությունները:</p>   | <p><b>8.2.</b> The Company has one Participant as per section 6.3 of this charter. The Sole Participant exercises the rights and bears the obligations reserved to the competence of the founders and Participants by the Law.</p>   |
| <p><b>8.3.</b> Ընկերության Մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Մասնակիցների թիվը 49-ից ավելի դառնալու դեպքում, Ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի կամ համապատասխանաբար կրճատի իր Մասնակիցների քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման:</p> | <p><b>8.3.</b> The number of Participants of the Company shall not exceed 49. In the event the number of Participants exceeds 49, the Company shall reorganize into an open joint stock company or a commercial cooperative or respectively reduce the number of its Participants within a year, or, otherwise, be subject to liquidation.</p> |
| <p><b>8.4.</b> Ընկերություն Մասնակիցներն իրավունք ունեն.</p>  | <p><b>8.4.</b> The Participants of the Company have the right to:</p>  |
| <p>8.4.1. Օրենքով կամ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը,</p>   | <p>8.4.1. participate in the governance of the Company, in the manner prescribed by the Law or this Charter;</p>   |
| <p>8.4.2. ստանալ տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ,</p>   | <p>8.4.2. obtain information on the activities of the Company;</p>   |
| <p>8.4.3. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող՝ Օրենսդրությամբ սահմանված շահույթի մասը,</p>   | <p>8.4.3. receive portion of the profits from the activities of the Company determined by the Legislation;</p>   |
| <p>8.4.4. Օրենսդրությամբ սահմանված կարգով իրենց բաժնեմասը (դրա մասը) օտարել Ընկերության մեկ կամ մի քանի Մասնակիցների կամ երրորդ անձանց,</p>   | <p>8.4.4. assign his/her/its shares (part of them) to the other Participants of the Company or third parties, in the manner prescribed by the Legislation;</p>   |

|  |   |
|--|---|
| 8.4.5. անկախ մյուս Մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից,   | 8.4.5. exit the Company at any moment regardless of the consent of other Participants;  |
| 8.4.6. գրավ դնել Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասը (դրա մասը),   | 8.4.6. pledge his/her/its shares (part of them) in the charter capital of the Company;  |
| 8.4.7. պահանջել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում աուդիտորի կողմից: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում է ստուգում պահանջող Մասնակիցը,   | 8.4.7. require audit of the financial-economic activities of the Company. In such case, the services of the auditor shall be paid by the requiring Participant;   |
| 8.4.8. Ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ Ընկերության մնացած գույքից:  | 8.4.8. receive a stake in the remaining property of the Company in case of liquidation.   |
| 8.5. Ընկերության Մասնակիցը (Մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ Մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը: Ընկերությունից հեռացված Մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերությանը: Ընկերության կողմից բաժնեմասի դիմաց վճարումը կատարվում է Օրենքով սահմանված կարգով: | 8.5. The Participant(s) of the Company, which jointly hold(s) at least 10 percent of shares of the Company, has (have) the right to request by court the squeeze-out of another Participant from the Company, if such Participant hinders or blocks the activity of the Company by his/her/its actions or inaction. The shares of the squeezed-out Participant shall be transferred to the Company. The payment by the Company against such shares shall be made in the manner prescribed by the Law. |
| 8.6. Ընկերության Մասնակիցների իրավունքները չեն սահմանափակվում սույն Կանոնադրության 8-րդ գլխով սահմանված իրավունքներով: Ընկերության Մասնակիցները ունեն նաև Օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ կամ Միակ Մասնակցի որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:  | 8.6. The rights of the Participants shall not be limited to the rights stipulated under this Chapter 8. The Participants have other rights granted by the Legislation, this Charter or the resolution of the Sole Participant.  |
| 8.7. Ընկերության Մասնակիցները պարտավոր են.   | 8.7. The Participants of the Company shall:   |
| 8.7.1. ներդրումներ կատարել Ընկերության կանոնադրական կապիտալում Միակ Մասնակցի որոշմամբ սահմանված կարգով,  | 8.7.1. make investments in the charter capital of the Company, in the manner prescribed by the resolution of the Sole Participant;  |
| 8.7.2. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող  | 8.7.2. refrain from publication of confidential information in relation to the activities of  |

|   |                        |  |
|---|------------------------|--|
| տեղեկություններ, օրենսդրությամբ սահմանված դեպքերի,  | բացառությամբ սահմանված | the Company, except for cases prescribed by the Legislation;   |
| 8.7.3. կատարել սույն Կանոնադրության և Միակ Մասնակցի որոշումների պահանջները,   |                        | 8.7.3. respect the terms of this Charter and resolutions of the Sole Participant;  |
| 8.7.4. կատարել Ընկերության հետ կնքված բոլոր առանձին պայմանագրերով նախատեսված պարտավորությունները՝ այդ պայմանագրերի դրույթներին և պայմաններին համապատասխան,  |                        | 8.7.4. perform the obligations under all separate agreements entered into by the Company, in accordance with the terms and provisions of such agreements;  |
| 8.7.5. Ընկերությանը ծանուցել բաժնեմասերի ցանկացած օտարման կամ գրավադրման կամ հասցեի ցանկացած փոփոխության մասին:   |                        | 8.7.5. notify the Company on any assignment or pledge of shares or any change of address.  |
| <b>8.8.</b> Ընկերության Մասնակիցները կրում են նաև Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:  |                        | <b>8.8.</b> The Participants of the Company shall bear other obligations prescribed by the Legislation or this Charter.  |
| <b>9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՑԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ</b>  |                        | <b>9. DISTRIBUTION OF PROFIT BETWEEN THE PARTICIPANTS AND DIVIDENDS</b>  |
| <b>9.1</b> Ընկերությունն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել շահույթի բաշխում Ընկերության Մասնակիցների միջև:  |                        | <b>9.1.</b> The Company may annually distribute profit among its Participants.   |
| <b>9.2</b> Բաշխման ենթակա շահույթը բացառապես ՀՀ դրամով բաշխվում է Ընկերության Մասնակիցների միջև՝ ըստ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:  |                        | <b>9.2.</b> The profit subject to distribution shall be distributed in AMD between the Participants of the Company, in correspondence with the number of shares of Participants in the charter capital of the Company. |
| <b>9.3</b> Տարեկան շահույթի բաշխման, դրա չափի և վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Միակ Մասնակցի կողմից:   |                        | <b>9.3.</b> The resolution on the annual distribution, amount and manner of payment of the profit shall be adopted by the Sole Participant.  |
| <b>9.4</b> Միակ Մասնակիցը կարող է որոշում ընդունել բաժնեմասերի դիմաց շահույթ չբաշխելու մասին:   |                        | <b>9.4.</b> The Sole Participant may adopt a resolution on non-distribution of profit against the shares.  |
| <b>9.5</b> Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել Ընկերության Մասնակիցների միջև շահույթի բաշխման մասին կամ վճարել Ընկերության Մասնակիցներին շահույթ, որի բաշխման մասին որոշումն արդեն ընդունված է. |                        | <b>9.5.</b> The Company shall not adopt a resolution on distribution of profit or pay the profit to the Participants upon a resolution on such distribution, which is already adopted:                                 |
| 9.5.1. մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը,   |                        | 9.5.1. until the full payment of the charter capital of the Company;   |

|  |  |
|--|--|
| <p>9.5.2. եթե որոշման ընդունման պահին Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից և պահուստային ֆոնդից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում,</p>                   | <p>9.5.2. if at the moment of adoption of such resolution the value of the net assets of the Company is or following such resolution will be less than the charter capital and the reserve fund of the Company;</p>                  |
| <p>9.5.3. Օրենքով նախատեսված այլ դեպքերում:</p>  | <p>9.5.3. in other cases prescribed by the Law.</p>  |
| <p><b>10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ</b></p>  | <p><b>10. GOVERNING BODIES OF THE COMPANY</b></p>  |
| <p><b>10.1 Ընկերության կառավարման մարմիններն են.</b></p>   | <p><b>10.1. The governing bodies of the Company are:</b></p>   |
| <p>10.1.1. Ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ «Ժողով»), որը հրավիրվում է Միակ Մասնակցի կողմից և որտեղ որոշումների ընդունումն իրականացվում է Միակ Մասնակցի կողմից,</p>   | <p>10.1.1. the General Meeting (hereinafter referred to as the “General Meeting”), which shall be convened by the Sole Participant and the resolutions made at the General Meeting shall be implemented by the Sole Participant;</p> |
| <p>10.1.2. Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ «Խորհուրդ»),</p>  | <p>10.1.2. the Board of Directors of the Company (hereinafter referred to as the “Board”);</p>   |
| <p>10.1.3. Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գործադիր տնօրենը:</p>  | <p>10.1.3. The sole executive body of the Company - the Executive Director.</p>  |
| <p><b>10.2 Ժողովը</b></p>  | <p><b>10.2. The General Meeting</b></p>  |
| <p>10.2.1. Ժողովն Ընկերության բարձրագույն մարմինն է:</p>   | <p>10.2.1. The General Meeting is the supreme body of the Company.</p>   |
| <p>10.2.2. Ժողովը բացառիկ իրավասություն ունի Ընկերության համար ընդունելու հետևյալ որոշումները՝ Միակ Մասնակցի գրավոր որոշումների հիման վրա.</p>   | <p>10.2.2. The General Meeting has exclusive authority to make the following decisions for the Company, upon the written resolutions of the Sole Participant:</p>  |
| <p>ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը,</p>  | <p>a) determination of main directions of the activities of the Company, as well as establishment of or participation in legal entities;</p>   |
| <p>բ) Ընկերության կանոնադրության և կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,</p>   | <p>b) amendments to the charter and the amount of the charter capital of the Company;</p>  |
| <p>գ) Խորհրդի անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակահատվածում պարգևատրումների և ծախսերի հատուցման չափերի սահմանումը,</p> | <p>c) appointment of the Board members, early termination of their powers, determination of amounts of indemnification of expenses and rewards during the performance of their obligations;</p>                                      |

|   |   |
|---|---|
| <p>դ) Գործադիր տնօրենի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Գործադիր տնօրենի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները, ինչպես նաև գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը տալու հարցերը,</p> | <p>d) the appointment and early termination of powers of the Executive Director of the Company, terms and conditions of remuneration and indemnification of expenses of the Executive Director, as well as transfer of powers of the executive body to a commercial entity or an individual entrepreneur;</p> |
| <p>ե) վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,</p>  | <p>e) appointment and early termination of powers of the control commission (controller);</p>   |
| <p>զ) տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը,</p>  | <p>f) approval of annual reports and annual balance sheet;</p>  |
| <p>է) Ընկերության շահույթն Մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,</p>   | <p>g) adoption of the resolution on distribution of profit between the Participants of the Company;</p>   |
| <p>ը) Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը (հաստատումը),</p>   | <p>h) adoption (approval) of the documents regulating the internal activities of the Company;</p>   |
| <p>թ) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,</p>   | <p>i) adoption of the resolution on issuance of securities by the Company;</p>  |
| <p>ժ) Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,</p>   | <p>j) adoption of the resolution on auditing of the Company;</p>  |
| <p>ժա) Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը,</p>   | <p>k) adoption of the resolution on reorganization and liquidation of the Company;</p>  |
| <p>ժբ) լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը,</p>  | <p>l) appointment of the liquidation commission and setting of the liquidation balance sheet;</p>   |
| <p>ժգ) Ընկերության պահուստային և այլ ֆոնդերի օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունումը,</p>   | <p>m) adoption of the resolutions on the use of reserve and other funds of the Company;</p>   |
| <p>ժդ) Օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:</p>   | <p>n) other issues prescribed by the Law.</p>   |
| <p><b>10.2.3.</b> Խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում Միակ Մասնակցի կամ Խորհրդի որոշումը:</p>  | <p>10.2.3. Resolution of the Sole Participant or the Board is not required for entering into major transactions.</p>  |
| <p><b>10.2.4.</b> Միակ Մասնակիցը կարող է ցանկացած պահի, բայց ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ, իր հայեցողությամբ գումարել Ժողով:</p>   | <p>10.2.4. The Sole Participant may convene a General Meeting at its sole discretion at any time, but not less than once a year.</p>  |

|  |   |
|--|---|
| <p>10.2.5. Ժողովի որոշումներն ընդունվում են Միակ Մասնակցի կողմից՝ վերջինիս հայեցողությամբ:</p>   | <p>10.2.5. The resolutions of the General Meeting shall be adopted by the Sole Participant at its sole discretion.</p>  |
| <p><b>10.3 Խորհուրդը</b></p>   | <p><b>10.3. The Board</b></p>   |
| <p>10.3.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն Կանոնադրությամբ վերապահված են Ժողովի կամ Գործադիր տնօրենի բացառիկ իրավասությանը:</p>   | <p>10.3.1. The Board carries out the general governance of the Company, except for the issues, which are reserved to the exclusive competence of the General Meeting or the Executive Director under this Charter.</p>  |
| <p>10.3.2. Խորհուրդը կազմված է 3 անդամից (ներառյալ՝ Նախագահը): Խորհրդի Նախագահը և անդամները պետք է համապատասխանեն ՀՀ ԿԲ կողմից սահմանված որակավորման ու մասնագիտական համապատասխանության չափանիշներին:</p>  | <p>10.3.2. The Board is composed of 3 members (including the Chairman). The Chairman and members of the Board shall meet the qualification and professional standards determined by the CBA.</p>  |
| <p>10.3.3. Խորհուրդը.</p>  | <p>10.3.3. The Board:</p>   |
| <p>ա) նախապատրաստում է առաջարկություններ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ,</p>   | <p>a) prepares suggestions in connection with the terms and conditions of remuneration and reimbursement of expenses of the control commission (controller) of the Company;</p>   |
| <p>բ) սահմանում է Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,</p>   | <p>b) determines the amount of remuneration of the Company's auditor;</p>   |
| <p>գ) Միակ Մասնակցի կողմից հաստատված Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև դրանցով չկարգավորված շրջանակներում հաստատում է Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը,</p> | <p>c) approves the internal acts regulating the activities of governing bodies of the Company in accordance with the documents regulating the internal activities of the Company approved by the Sole Participant, as well as inasmuch as such activities are not regulated under such documents;</p> |
| <p>դ) հաստատում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,</p>  | <p>d) approves the administrative structure of the Company;</p>   |
| <p>ե) հաստատում է Ընկերության ծախսերի ամենամյա նախահաշիվը և դրա կատարողականը,</p>  | <p>e) approves the annual expenditure estimate and performance plan of the Company;</p>   |

|   |   |
|---|---|
| <p>զ) հաստատում է Ընկերության հաստիքացուցակը, բացառությամբ Տնօրենի, ով նշանակվում է բացառապես Միակ Մասնակցի կողմից,</p>   | <p>f) approves the staff list of the Company, with the exception of the Director, who is appointed solely by the Sole Participant;</p>  |
| <p>է) հիմնում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ,</p>  | <p>g) establishes branches, representative offices and agencies;</p>  |
| <p>է1) հաստատում է Ընկերության գործունեության կազմակերպման հետ կապված մշտական սկզբունքով գործող կոլեգիալ մարմինների՝ կոմիտեների, հանձնաժողովների, գործունեության կարգը, ձևավորում է այդ կոլեգիալ մարմինները, հաստատում և փոփոխում է դրանց կազմը,</p>  | <p>g1) approves regulations of activity for all permanently acting collegial bodies, such as committees, commissions, creates such collegial bodies, confirms and changes their members;</p>  |
| <p>է2) սահմանում է Ընկերության կողմից վարձակալվող գույքի վարձավճարի և վարձակալության այլ պայմանների որոշումը,</p>   | <p>g2) defines rental fees and other terms of the assets leased by the Company;</p>   |
| <p>է3) հաստատում է Ընկերության խոշոր գործարքները (խոշոր է համարվում որոշման կայացման պահին 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ դրա համարժեքը գերազանցող գործարքը): Ընդ որում խոշոր չեն ճանաչվում Ընկերության բնականոն գործունեության հետ կապված գործարքները (առօրյա տնտեսական գործունեության ընթացքում կնքվող գործարքները), ներառյալ վարկերը, վարկային գծերը, եկամտին մասնակցության վարկերը, կապիտալում մասնակցությամբ ֆինանսավորումները և վարկային/ներդրումային բնույթի այլ գործարքները՝ անկախ դրանց գնից/արժեքից:</p> | <p>g3) approves major transactions of the Company (the transaction is deemed as major if at the moment of making decision for approving the transaction it exceeds 50,000,000 (fifty million) AMD or equivalent). The transactions related with the ordinary course of activity of the Company (transactions concluded during the daily business activity), including loans, lines of loans, income participation loans, equity financing and other loan/investment transactions, do not deemed as major transactions regardless the price/value of particular transaction.</p> |
| <p>ը) լուծում է Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր:</p>  | <p>h) decides on other issues prescribed by the Legislation and this Charter.</p>   |
| <p>10.3.4. Խորհրդի անդամներն ընտրվում են Միակ Մասնակցի կողմից: Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում սույն Կանոնադրությամբ: Նրանք ընտրվում</p>  | <p>10.3.4. The Board members shall be elected by the Sole Participant. This charter shall not limit the term of office of the Board members. The Board members shall be elected for a term defined by the Sole</p>  |



|   |  |
|---|--|
| <p>են Միակ Մասնակցի կողմից սահմանված ժամկետով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարեցվում են Միակ Մասնակցի որոշմամբ:</p>   | <p>Participant. The powers of the Board members shall be terminated by the resolution of the Sole Participant.</p>   |
| <p>10.3.5. Խորհրդի անդամ կարող է լինել գործունակ քաղաքացին: Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող Խորհրդում մեծամասնություն կազմել: Միակ Մասնակցի որոշմամբ Խորհրդի անդամների նկատմամբ կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:</p>         | <p>10.3.5. Legally capable individual may be a Board member. The representatives of the executive body of the Company shall not be a majority in the Board. Other restrictions and requirements for Board members may be prescribed by the resolution of the Sole Participant.</p> |
| <p>10.3.6. Խորհրդի Նախագահին ընտրում են Խորհրդի անդամները՝ Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել Նախագահին կամ ընտրել նոր Նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> | <p>10.3.6. The Chairman of the Board shall be elected by and from the Board members by the majority votes of the Board members. The Board may at any time re-elect the Chairman of the Board or elect a new Chairman by the majority votes of the Board members.</p>               |
| <p>10.3.7. Խորհրդի նախագահը.</p>  | <p>10.3.7. The Chairman of the Board shall:</p>  |
| <p>ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,</p>  | <p>a) organize the works of the Board;</p>   |
| <p>բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք,</p>   | <p>b) convene and chair the Board meetings;</p>  |
| <p>գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը և արձանագրությունների պահպանումը,</p>   | <p>c) organize the taking and keeping of minutes of the Board meetings;</p>  |
| <p>դ) նախագահում է Ժողովներում:</p>   | <p>d) chair the General Meetings.</p>  |
| <p>10.3.8. Խորհրդի Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի Նախագահի կողմից նշանակված Խորհրդի անդամը:</p>  | <p>10.3.8. In the event of absence of the Chairman of the Board, his/her duties shall be executed by a Board member designated by the Chairman.</p>  |
| <p>10.3.9. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, կամ Խորհրդի անդամի պահանջի հիման վրա:</p>   | <p>10.3.9. The Board meetings shall be convened by the Chairman of the Board at his/her initiation or upon request of a Board member.</p>  |
| <p>10.3.10. Խորհրդի անդամները Խորհրդի նիստի անցկացման, ինչպես նաև օրակարգում ընդգրկված հարցերի և նյութերի մասին պետք է տեղեկացվեն</p>   | <p>10.3.10. The Board members shall be notified on the Board meeting, items included in the agenda and the materials at least 3 (in case of urgent issues – 1) days prior to the</p>   |

|  |  |
|--|--|
| <p>Խորհրդի անցկացումից առնվազն 3 (հրատապ հարցերի դեպքում՝ 1) օր առաջ՝ համապատասխան ծանուցումներն առնվազն ուղարկելով նրանց էլեկտրոնային փոստի հասցեին: Խորհրդի անդամը համարվում է պատշաճ ծանուցված վերջինիս կողմից ծանուցման ստացումը հաստատող էլեկտրոնային նամակ ստանալու դեպքում:</p>   | <p>Board meeting via at least sending the notices to the e-mail addresses of the Board members. Notice shall be considered duly provided if a receipt confirmation email is received from the Board members.</p>   |
| <p>10.3.11. Խորհրդի նիստն իրավագոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Խորհրդի բոլոր անդամները:</p>   | <p>10.3.11. The Board meeting has quorum, if all Board members participate in such meeting.</p>  |
| <p>10.3.12. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:</p>  | <p>10.3.12. The resolutions of the Board shall be adopted by the majority votes of the participating members.</p>  |
| <p>10.3.13. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:</p>  | <p>10.3.13. Each Board member is entitled to one vote during the voting.</p>   |
| <p>10.3.14. Խորհրդի որոշումը կարող է ընդունվել առանց Խորհրդի նիստի հրավիրման՝ անցկացնելով հեռակա քվեարկություն (հարցման միջոցով): Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով: Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Խորհրդի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Խորհրդի բոլոր անդամները:</p> | <p>10.3.14. The resolution of the Board may be adopted without convening a Board meeting, via remote voting (inquiry). Such voting may be organized by exchange of documents through postal, fax, teletype, telephone, electronic and other means of communication ensuring the authenticity and documental approval of messages to be transferred and received. The resolution of the Board adopted through remote voting is valid, if all Board members have participated in the voting.</p> |
| <p>10.3.15. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել նաև այնպիսի նիստով, որի ժամանակ Խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:</p>   | <p>10.3.15. The resolutions of the Board may also be adopted in such meetings, where the Board members communicate with each other in real-time mode through telephone, telecommunication or other means of communication.</p>   |
| <p>10.3.16. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը</p>  | <p>10.3.16. Minutes of the Board meeting shall be taken. Such minutes shall be drafted</p>   |

|   |   |
|---|---|
| <p>կազմվում է նիստի ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի բոլոր անդամները և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության համար:</p>   | <p>within five days following the meeting. Minutes shall be signed by all Board members and the secretary, who shall be liable for the accuracy of the information included in the minutes.</p>   |
| <p><b>10.4. Գործադիր մարմինը</b></p>  | <p><b>10.4. Executive body</b></p>  |
| <p>10.4.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ <b>Գործադիր տնօրենը:</b></p>  | <p>10.4.1. The current activities of the Company are managed by the <b>Executive Director</b>-the Sole executive body of the Company.</p>   |
| <p>10.4.2. Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ ղեկավարման վերաբերյալ այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրության կամ գործող օրենսդրության համաձայն վերապահված չեն Ընկերության Ժողովին կամ Խորհրդին:</p>  | <p>10.4.2. The Company's executive body are responsible for all matters concerning the current management of the Company, which are not within the scope of competence of Company's General Meeting or Board, as prescribed by this Charter of the Company or current legislation in force.</p>   |
| <p><b>10.4.3. Գործադիր տնօրեն</b></p>   | <p><b>10.4.3. Executive Director</b></p>  |
| <p><b>10.4.3.1.</b> Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը հաշվետու է Ժողովին և Խորհրդին:</p>   | <p><b>10.4.3.1.</b> The day-to-day activities of the Company shall be managed by the Executive Director. The Executive Director shall be accountable to the General Meeting and the Board.</p>  |
| <p><b>10.4.3.2.</b> Գործադիր տնօրենը կազմակերպում է Միակ Մասնակցի և Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը:</p>   | <p><b>10.4.3.2.</b> The Executive Director ensures the execution of resolutions of the Sole Participant and the Board.</p>  |
| <p><b>10.4.3.3.</b> Ընկերության և Գործադիր տնօրենի միջև պայմանագիրն Ընկերության անունից ստորագրվում է Ժողովի Նախագահի կամ Միակ Մասնակցի կողմից լիազորված անձի կողմից:</p>   | <p><b>10.4.3.3.</b> The agreement between the Executive Director and the Company on behalf of the Company shall be signed by the Chairman of the General Meeting or the person authorized by the Sole Participant.</p>  |
| <p><b>10.4.3.4. Գործադիր տնօրենը.</b><br/> ա) տնօրինում է Ընկերության գույքը,<br/> բ) ներկայացնում է Ընկերությունը և նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,<br/> գ) տալիս է լիազորագրեր, այդ թվում, բայց ոչ միայն՝ վերալիազորման իրավունքով Ընկերության անունից հանդես գալու համար,<br/> դ) գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի,</p> | <p><b>10.4.3.4. The Executive Director:</b><br/> (a) disposes the property of the Company;<br/> (b) represents the Company and its interests in the Republic of Armenia and abroad;<br/> (c) issues power of attorneys, including, but not limited to with the right of re-authorization, to represent the Company in accordance with the procedure established by the General Meeting;<br/> (d) acts on behalf of the Company without any power of attorney;</p> |

ե) սահմանված կարգով կնքում է գործարքներ (պայմանագրեր) Ընկերության անունից, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր,

զ) որոշում է կադրերի ընտրության, տեղաբաշխման և վերապատրաստման հարցերը, տալիս է հրամաններ՝ Ընկերության աշխատակիցների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

է) բանկերում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

ը) Խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, Խորհրդի կողմից հաստատված կառուցվածի և ծախսերի նախահաշվի հիման վրա հաստատում է Ընկերության հաստիքացուցակը (աշխատատեղերի ցուցակը),

թ) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է պարտադիր և այլ ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ) կնքում է ցանկացած այլ գործարք կամ իրականացնում է ցանկացած այլ գործողություն, որի լիազորությունը ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ կամ Ընկերության ներքին իրավական ակտերով վերապահված չէ Ժողովին, Խորհրդին,

ժա) Ընկերության վարկառուների հետ հարաբերություններում՝

- կայացնում է տրամադրված վարկի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացման մասին որոշում՝ վարկառուի հետ կնքված պայմանագրով սահմանված դեպքերում,
- կայացնում է տվյալ վարկառուին վարկի կամ ներդրման հերթական տրանշը (մասնաբաժինը) տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին որոշում,
- կայացնում է տվյալ վարկառուի վերաբերյալ սնանկության դիմում ներկայացնելու մասին որոշում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում,
- հաստատում է վարկառուի նկատմամբ ֆինանսական և գործունեության մոնիթորինգի ժամանակացույցը,

(e) enters into transactions (agreements) on behalf of the Company, including labour agreements, in the prescribed manner;

(f) decides on election, allocation and training of staff, gives orders on appointment, replacement and firing of employees, applies encouragement measures and disciplinary sanctions;

(g) opens settlement and other accounts in banks;

(h) submits the administrative structure of the Company for Board consideration and approval, as well as approves staff list of the Company on the basis of Board's approved administrative structure and cost estimate;

(i) gives orders, binding and other instructions and controls their execution in the scope of his/her competence;

(j) concludes any other transaction or performs any other action, which, according to RA legislation, this charter or internal legal acts of the Company, is not within the scope of competence of the General Meeting, the Board;

(k) within the relations with Company's borrowers:

- resolves to submit an early repayment request of the disbursed loan in cases provided by the agreement with the borrower;
- resolves to disburse or to refuse the disbursement of the regular tranche of the loan or of the investment;
- resolves to file a bankruptcy application of the borrower in the event if the grounds defined by the RA legislation exist;
- approves the financial and activity monitoring schedule of the borrower;
- approves the deals of restructuring, refinancing and settlement agreements of the non-performing loans;

(l) makes a decision on terms of realization of property pledged in favor of the Company, including, but not limited to realization price (including the cases of taking of ownership), realization procedure, choice of the third-party buyer, as well as expenses of maintenance and other maintenance conditions of the transferred property;

(m) approves the decisions of the permanently acting collegial bodies (committees, commissions, etc.);

(n) executes other powers prescribed by the Legislation and this Charter.

|  |   |
|--|---|
| <p>- հաստատում է ժամկետանց վարկերի վերակառուցման, վերաֆինանսավորման և հաշտության համաձայնությունների վերաբերյալ գործարքները,</p> <p>ժբ) հաստատում է հոգուտ Ընկերության գրավադրված գույքի իրացման պայմանները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ գույքի իրացման (ներառյալ՝ ի սեփականություն վերցնելու) արժեքը, իրացման ձևը, երրորդ անձ գնորդի ընտրությունը, ինչպես նաև ի սեփականություն անցած գույքի պահպանման ծախսերի և այլ պայմանների որոշումը,</p> <p>ժգ) հաստատում է Ընկերության մշտական սկզբունքով գործող կոլեգիալ մարմինների (կոմիտեներ, հանձնաժողովներ և այլն) որոշումները,</p> <p>ժդ) իրականացնում է Օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:</p> |   |
| <p>10.4.3.5. Գործադիր տնօրենի բացակայության կամ նրա պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները կատարում է Գործադիր տնօրենի տեղակալը կամ Օրենսդրությամբ թույլատրված այլ անձ:</p>  | <p>10.4.3.5 In the event of absence or impossibility of execution of the Executive Director's duties, the powers of the latter shall be performed by his/her deputy, or another person as allowed by the Legislation.</p>   |
| <p><b>10.5. Խորհրդի անդամների և Գործադիր տնօրենի պատասխանատվությունը</b></p>   | <p><b>10.5. The Liability of the Board Members and the Executive Director</b></p>   |
| <p><b>10.5.1.</b> Խորհրդի անդամները, Գործադիր տնօրենը և գլխավոր հաշվապահ – ֆինանսական վերահսկողն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են գործել ի շահ Ընկերության՝ բարեխղճորեն և ողջամիտ:</p>   | <p><b>10.5.1.</b> The Board members, the Executive Director and the chief accountant-financial controller shall act, while exercising their rights and performing their duties, in good faith and reasonably in the interests of the Company.</p>   |
| <p><b>10.5.2.</b> Խորհրդի անդամները, Գործադիր տնօրենը պատասխանատվություն են կրում Ընկերությանն իրենց մեղքով պատճառված վնասների համար, եթե Օրենսդրությամբ պատասխանատվության այլ հիմքեր և չափեր նախատեսված չեն: Ընդ որում, պատասխանատվություն չեն կրում Ընկերության Խորհրդի այն անդամները, որոնք դեմ են քվեարկել Ընկերությանը վնասներ պատճառած</p>   | <p><b>10.5.2.</b> The Board members, the Executive Director shall be liable for damages caused by their fault to the Company, unless other grounds or amounts of liability are prescribed by the Legislation. Board members who have voted against the decision that caused the damages or have been absent from the voting, shall not bear liability for such damages.</p> |

|  |   |
|--|---|
| որոշմանը կամ չեն մասնակցել քվեարկությանը:  |   |
| <p><b>10.5.3.</b> Խորհրդի անդամի և Գործադիր տնօրենի կողմից Ընկերությանը պատճառված վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունեն Ընկերությունը և նրա Մասնակիցը (Մասնակիցները):</p> | <p>10.5.3. The Company and its Participant(s) shall have the right to apply to the court for indemnification of damages caused to the Company by a Board member and the Executive Director.</p>                     |
| <p><b>10.6. Ընկերության գլխավոր հաշվապահ-ֆինանսական վերահսկողը</b></p>   | <p><b>10.6. The Chief Accountant – financial controller of the Company</b></p>  |
| <p><b>10.6.1.</b> Ընկերության գլխավոր հաշվապահ-ֆինանսական վերահսկողը իրականացնում է.</p>   | <p><b>10.6.1.</b> The chief accountant-financial controller of the Company shall be in charge of:</p>   |
| <p>ա) հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարումը՝ Օրենսդրությանը և Ընկերության ներքին կանոնների համապատասխան,</p>   | <p>a) maintenance of accounting and filing of reports in accordance with the Legislation and internal rules of the Company;</p>   |
| <p>բ) Ընկերության հաշվեկշռի կազմումը,</p>  | <p>b) compiling of the Company’s balance sheet;</p>   |
| <p>գ) բյուջեի պլանավորումը,</p>  | <p>c) planning of the budget;</p>   |
| <p>դ) Ընկերության կողմից կատարվող գործառնությունների հաշվապահական վերահսկողությունը,</p>   | <p>d) accounting control over the transactions entered into by the Company;</p>   |
| <p>ե) հարկային, ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմումը և դրանց ներկայացումը ՀՀ լիազորված մարմիններին և Մասնակիցներին, դրանցում արտացոլվող տվյալների արժանահավատության ապահովումը,</p>  | <p>e) preparation of tax, financial and other reports, submission of such reports to RA authorized bodies and Participants of the Company and ensuring of accuracy of the information included in such reports;</p> |
| <p>զ) սահմանված կարգով և ժամկետներում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը,</p>  | <p>f) publication of financial reports of the Company in the prescribed manner and terms;</p>   |
| <p>է) Ընկերության աշխատողների աշխատավարձի հաշվարկը,</p>  | <p>g) calculation of salaries of the employees of the Company;</p>  |
| <p>ը) Ընկերության մասնաճյուղերի և տարածքային այլ ստորաբաժանումների հաշվապահական հաշվառման վարման և գործառնությունների գրանցման վերահսկումը,</p>  | <p>h) control over the accounting and registration of operations by the branches and other territorial subdivisions of the Company;</p>   |
| <p>թ) Տնօրենի հանձնարարականների, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմինների կողմից</p>   | <p>i) execution of instructions of the Director, as well as fulfilment of the obligations prescribed under internal</p>   |

|   |   |
|---|---|
| <p>ընդունված ներքին իրավական ակտերով և աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:</p>   | <p>legal acts adopted by the governing bodies of the Company and the employment agreement.</p>  |
| <p><b>10.6.2.</b> Գլխավոր հաշվապահը- ֆինանսական վերահսկողը Օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:</p>   | <p><b>10.6.2.</b> The chief accountant-financial controller shall be liable for the damages caused to the Company by his/her actions (inaction), in the manner prescribed by the Legislation.</p>   |
| <p><b>10.7. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգող)</b></p>  | <p><b>10.7. The Control Commission (Controller) of the Company</b></p>  |
| <p><b>10.7.1.</b> Ընկերությունը չունի վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող), քանի որ այն ունի մեկ Մասնակից (Միակ Մասնակից):</p>   | <p>10.7.1. Since the Company has one Participant (the Sole Participant), it shall not have a control commission (controller).</p>   |
| <p><b>11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ՀԱՇՎԱՍՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p>  | <p><b>11. THE BALANCE SHEET, ACCOUNTING AND REPORTS OF THE COMPANY</b></p>  |
| <p><b>11.1</b> Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ: Հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքները սահմանվում են Օրենսդրությամբ:</p>   | <p><b>11.1.</b> The Company shall maintain accounting and file financial reports. The principles of accounting and filing of the reports are prescribed by the Legislation.</p>   |
| <p><b>11.2</b> Ընկերությունը կազմում և ՀՀ ԿԲ է ներկայացնում հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված ձևերով և պարբերականությամբ:</p>   | <p><b>11.2.</b> The Company shall prepare and file reports with the CBA in the forms and with the periodicity prescribed by the CBA.</p>  |
| <p><b>11.3</b> Ընկերության հաշվապահական հաշվառումը իրականացվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>  | <p><b>11.3.</b> The accounting of the Company shall be performed according to the Legislation.</p>  |
| <p><b>11.4</b> Ընկերությունը կազմում և Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հրապարակում է հաշվետվություններ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով:</p>  | <p><b>11.4.</b> The Company shall prepare and publish reports within the terms prescribed by the Legislation, in the manner prescribed by the CBA.</p>  |
| <p><b>11.5</b> Յուրաքանչյուր տարի Ընկերությունը ստուգվում է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպությունն ընտրվում է Միակ Մասնակցի որոշման հիման վրա: Անկախ աուդիտորական կազմակերպության հետ պայմանագիրը կնքում է Տնօրենը: Խորհուրդը որոշում է անկախ աուդիտորական կազմակերպության</p> | <p><b>11.5.</b> Each year the Company shall undergo an audit by an independent auditing organization. Such independent auditing organization shall be appointed by the resolution of the Sole Participant. The agreement with the independent auditing organization shall be signed by the Director. The Board shall determine the amount of remuneration of the independent auditing organization.</p> |

|   |   |
|---|---|
| <p>ծառայությունների համար վճարվող գումարի չափը:</p>   |   |
| <p><b>11.6</b> Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության բաժնեմասերի առնվազն հինգ տոկոսի սեփականատեր հանդիսացող Մասնակցի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունների դիմաց վճարում է ստուգում պահանջող Մասնակիցը:</p>   | <p><b>11.6.</b> The audit of financial-economical activities of the Company may also be performed upon request of a Participant holding at least five percent of the shares in the Company. In such case, the remuneration of the auditor shall be paid by the requiring Participant.</p>   |
| <p><b>11.7</b> Ընկերության արտաքին աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև անկախ աուդիտորական կազմակերպության հետ կայացված համաձայնությանը համապատասխան:</p>  | <p><b>11.7.</b> The external audit of the Company shall be performed in accordance with laws regulating audit activities and other legal acts, as well as as agreed upon with the independent auditing organization.</p>  |
| <p align="center"><b>12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p>   | <p align="center"><b>12. SEPERATE SUBDIVISIONS AND SUBSIDIARIES OF THE COMPANY</b></p>  |
| <p><b>12.1.</b> Ընկերությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:</p>  | <p><b>12.1.</b> The Company may establish in the Republic of Armenia and foreign states separate subdivisions (branches and representative offices) not having the status of a legal entity.</p>  |
| <p><b>12.2.</b> Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության առանձնացված ստորաբաժանումները ստեղծվում են Օրենսդրությանը համապատասխան և գործում են ՀՀ ԿԲ կողմից գրանցվելուց հետո: Օտարերկրյա պետությունների տարածքում Ընկերության առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է այդ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:</p> | <p><b>12.2.</b> Separate subdivisions of the Company in Armenia shall be established in accordance with the Legislation and shall initiate their operation upon registration with the CBA. Establishment of separate subdivisions of the Company in the territory of foreign states shall be performed in accordance with the laws and other legal acts of the respective state, unless otherwise prescribed under the international treaties of the Republic of Armenia.</p> |
| <p><b>12.3.</b> Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի կողմից:</p>  | <p><b>12.3.</b> The resolutions on the establishment of separate subdivisions of the Company shall be adopted by the Board.</p>   |



|   |   |
|---|---|
| <p>12.4. Ընկերության մասնաճյուղը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից: Մասնաճյուղը իրականացնում է Օրենսդրությամբ նախատեսված այնպիսի ֆինանսական գործառնություններ (ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով), որոնք նախատեսվում են մասնաճյուղի կանոնադրությամբ:</p>   | <p>12.4. The branch of the Company shall act within the powers vested by the Company and on the behalf of the latter. The branch shall carry out financial operations prescribed by the Legislation (both in AMD and other currencies), which are provided by the charter of the branch.</p>  |
| <p>12.5. Ընկերությունն իրավունք ունի Միակ Մասնակցի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ և մասնակցել դրանցում:</p>   | <p>12.5. The Company may upon resolution of the Sole Participant establish and participate in subsidiaries and dependent companies with a status of a legal entity in the Republic of Armenia and foreign states.</p>   |
| <p>12.6. Օտարերկրյա պետություններում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը իրականացվում է այդ երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:</p> | <p>12.6. Establishment of or participation in subsidiaries and dependent entities having the status of a legal entity in the territory of foreign states shall be completed in accordance with the laws and other legal acts of the respective state, unless otherwise prescribed by the international treaties of the Republic of Armenia.</p> |
| <p>12.7. Հայաստանի Հանրապետության տարածքում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը կատարվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>  | <p>12.7. Establishment of or participation in subsidiaries and dependent entities in the territory of the Republic of Armenia shall be completed in the manner prescribed by the Legislation.</p>   |
| <p style="text-align: center;"><b>13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ</b></p>   | <p style="text-align: center;"><b>13. REORGANIZATION AND LIQUIDATION OF THE COMPANY</b></p>   |
| <p>13.1 Ընկերությունը կարող է կամավոր վերակազմակերպվել Միակ Մասնակցի որոշմամբ: Ընկերությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել միայն Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Ընկերությունը կարող է վերակազմավորվել բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի:</p>                           | <p>13.1. The Company may voluntarily be reorganized upon the resolution of the Sole Participant. The Company may be reorganized by court solely in cases and in the manner prescribed by the Legislation. The Company may transform (change its legal-organizational form) into a joint stock company or a commercial cooperative.</p>          |
| <p>13.2 Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով:</p>   | <p>13.2. The reorganization of the Company shall be performed in the manner and in accordance with the terms prescribed by the Code.</p>  |

|   |   |
|---|---|
| <p><b>13.3</b> Ընկերությունը լուծարվում է Միակ Մասնակցի որոշման հիման վրա կամ Օրենսդրությամբ սահմանված հիմքերով: Ընկերության լուծարման հիմքերն ու կարգը սահմանվում են «Բանկերի և քանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ գլխով:</p> | <p><b>13.3.</b> The Company may be liquidated upon the resolution of the Sole Participant or on the grounds provided by the Legislation. Grounds and manner of liquidation of the Company are prescribed by Chapter 9 of the Law on Banks and Banking of the Republic of Armenia.</p> |
| <p><b>13.4</b> Ընկերության լուծարումը հանգեցնում է վարկային կազմակերպության գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի ուժը կորցրած ճանաչվելուն և Ընկերության որպես իրավաբանական անձի գոյության դադարման:</p>   | <p><b>13.4.</b> The liquidation of the Company shall result in revocation of the license on carrying out of credit organization activities and the cease of the Company's existence as a legal entity.</p>  |

|   |  |  |   |                                       |  |
|---|--|--|---|---------------------------------------|--|
| <p><b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b><br/> <b>«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ</b><br/> <b>կանոնադրության</b></p>   |  |  | <p><b>ANNEX 1</b><br/> <b>of the charter of GAZELLE FINANCE UCO LLC</b></p>   |                                       |  |
| <p><b>«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ»</b><br/> <b>ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ</b><br/> <b>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</b><br/> <b>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ</b><br/> <b>ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ</b><br/> <b>ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ</b></p>   |  |  | <p><b>LIST OF PARTICIPANTS</b><br/> <b>OF</b><br/> <b>GAZELLE FINANCE</b><br/> <b>UNIVERSAL CREDIT ORGANIZATION</b><br/> <b>LIMITED LIABILITY COMPANY</b></p>   |                                       |  |
| <p><b>Մասնակցի անունը,</b><br/> <b>ազգանունը</b><br/> <b>(անվանումը),</b><br/> <b>անձնագրային</b><br/> <b>(գրանցման)</b><br/> <b>տվյալները,</b><br/> <b>բնակության</b><br/> <b>(գտնվելու) վայրի</b><br/> <b>հասցեն, ՀՕՀ (ՀՎՀՀ)</b></p>  | <p><b>Բաժնեմասը</b><br/> <b>(դրամ)</b></p> | <p><b>Բաժնե</b><br/> <b>մասի</b><br/> <b>չափ</b></p> | <p><b>Forename, surname</b><br/> <b>(entity name), passport</b><br/> <b>(registration) data, address</b><br/> <b>(legal address), social</b><br/> <b>security number (TIN)</b></p>  | <p><b>Share</b><br/> <b>(AMD)</b></p> | <p><b>Num</b><br/> <b>ber of</b><br/> <b>Share</b><br/> <b>s</b></p> |
| <p>Նիդերլանդների<br/> թագավորության<br/> իրավաբանական<br/> անձ<br/> <b>ԳԱԶԵԼ ՖԱՅՆԵՆՍ</b><br/> <b>ՀՈԼԴԻՆԳ</b><br/> <b>ԿՈՈՊԵՐԱՏԻՎ</b><br/> <b>ՑՈՒ.ԷՅ.,</b></p> <p>նույնականացման<br/> համար՝ 68450974,<br/> գրանցման օրը՝<br/> 31.03.2017թ., ՀՎՀՀ՝<br/> 857449837,<br/> գտնվելու վայրը՝<br/> Գուստավ<br/> Մահլերպփիլեյն 3,<br/> HFC, 26-րդ հարկ,<br/> 1082MS Ամստերդամ,<br/> Նիդերլանդների<br/> Թագավորություն:</p> | <p>3,688,690,420</p>                       | <p>100%</p>  | <p>Legal entity incorporated<br/> under the laws of<br/> Netherlands</p> <p><b>GAZELLE FINANCE</b><br/> <b>HOLDING</b><br/> <b>COÖPERATIEF U.A.;</b></p> <p>identification number:<br/> 68450974;<br/> registration date:<br/> 31.03.2017;<br/> TIN: 857449837;<br/> legal address: Gustav<br/> Mahlerplein 3, HFC, 26th<br/> floor, 1082MS<br/> Amsterdam, the<br/> Netherlands.</p> | <p>3,688,690,420</p>                  | <p>100%</p>  |